ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լենտեքս ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/06 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Վերնաշապիկ (երկարաթև)՝ ուսադիրներով (Ձև 12): Վերնաշապիկ (բաց կապույտ՝ ընդհանուր խմբաքանակի առնվազն 90 տոկոսը, և սպիտակ), որը պատրաստվում է 60% բամբակյա խիտ կտորից (40% պոլիեսթեր, 190 գ/մ2), երկարաթև՝ հանվող ուսադիրներով, ծալովի օձիքով: Վերնաշապիկը կոճկվում է 8 կոճակով, վերևի մասում առանց կոճակի: Առաջամասերին մշակված են ձևավոր ծալքով և կափույրով գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ կոճակով: Վերնաշապիկի ներքևի մասում կարվում է 55 մմ լայնությամբ գոտի՝ կողքային մասերում 12-18 սմ երկարությամբ ներկարված առաձգական ժապավենով: Առջևի մասի գոտին կոճկվում է 2 կոճակով: Երկարաթև վերնաշապիկը ավելի կոշտ օձիքով հարմարեցվում է փողկապի հետ: Կանացի վերնաշապիկը՝ առջևից գրպանների տակից մինչև գոտին, ունի սեղմոն և կոճկվում է ձախից: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20): Վերնաշապիկները ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափը: Նախքան վերնաշապիկների պատրաստումը վերնաշապիկների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Վերնաշապիկների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև վերնաշապիկների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Կանացի և տղամարդու վերնաշապիկների քանակները՝ համաձայն ձևավորված

	պատվերի: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/06 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	